

Title: THE RESURRECTION

Preached by Dr. w. eUGENE SCOTT

Copyright © 2006, Pastor Melissa Scott. – All rights reserved

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դ-ր Վ. Զին Սկոտտի կողմից (լիլիտովիայության դրկտոր, Ստենֆորդի համալսարան):
Թարողը տեղի է ունեցել Լու-Անջելոսի համալսարանի տաճարում 1992թ. ապրիլի 19-ին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես կորցրեցի իմ հավատքը քոլեզում: Ես կորցրեցի այս մի անսկատ հոգեբանական ճնշման պատճառով: Ես հավատում եի Յիսուսին որպես բարի - իմաստուն ուսուցչի - նրան հավասարեցնում եի Մուհամեդի մակարդակին, որը հիմնեց Խալամի հավատքը, Յնդկաստանի արքայազն Գաուտամա Բուդդային, որը հիմնեց Բուդդիզմը, Չինաստանի Կոմֆուցիոնին (իրականում՝ ավելի շատ քաղաքական փիլիսոփա), որի ասած խոսքերն այդքան մեծ ազդեցություն ունեցան աշխարհի այդ մասի վրա, կարճ ասած՝ ցանկացած հարգված կրոնի հիմնադրին:

Ես կարող եի Յիսուսին դասել նրանց շարքում՝ նրան համարելով »բարի - իմաստուն ուսուցիչ«, - լինել ընդունված՝ պահպանելով իմ մտավորականության կողմերը, բայց մնալ այն համոզմունքին, որ Յիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, գերբնական ալընդունելի էր: Ի միջի այլոց, կարող եմ ասել, որ գոյություն ունի տեսաժապավենների վաճառքը գովազդող մեկ ժամանց մի տեսահոլովակ, նշանակություն չունի, թե ինչպիսի խորամանկությամբ են նրանք ներկայացնում դա, որը պատմում է բոլոր կրոնների ծագման մասին:

Եվ դա իսկապես »խելացի է «, որովհետ- այն սկիզբ է առնում Եգիպտոսից, - նրանք երբեք չեն անդրադառնում Շումերները, որտեղից - սկսվել են Եգիպտոս Ներիսած կրոնները (- նրանք երբեք չեն հասնում Բաբելոնին), - ոչ ոք խելամտորեն չի ժիտում Եգիպտոսի ազդեցությունը հրեաների - հույների վրա: Կիրուս Գորդոնը հաստատել է դա:

Բայց մի փոքրիկ, թմբիկ տղա նստած է այնտեղ, - բարեկիրթ, կոկիկ սանրված, ուսուցանված, հեռուստատեսային ավետարանչի տեսք ունեցող մի երիտասարդ նույնապես նստած է այնտեղ, - նրանք պատմում են թեզ, թե ինչպես են սկիզբ առել բոլոր կրոնները, այսուհետ- նրանք անուղղակիրուն ակնարկում են 16 խաչված փրկիչներին, որոնց հնարավոր չեն գտնել համանմանության անորոշ ենթադրության մեջ:

Եվ դու ընդմիշտ ունենում ես այս տիեզերաժողովային մոտեցումը դեպի կրոնը՝ ոչ մի կրոնի կրոնը, որովհետ- ինչպես նրանք են ասում բոլոր կրոններն ունեն »նույն արմատը«: Սա անսկատ գալիս է թեզ վրա՝ կարծես թե դու բավականաչափ խելացի չես, մինչ- որ դու չես խոստովանում այն »պարզ« մոտեցումը Քրիստոսի հանդեպ՝ որպես գերբնական, Աստծո Որդի, - ընդունում ես նրան որպես հասարակ կրոնական հոսանքների մեջ գտնվող մեկ այլ արտահայտում - այլ հիմնադիր՝ որպես »բարի - իմաստուն ուսուցիչ«:

Վերջերս թերթերում հայտնվեց մի նոր երիտասարդ, որը գրում էր, որ Յիսուսը սոցիալական հեղափոխության մտքերով մի համր գյուղացի էր, բայց դա ավելի շուտ համանման գյուղական հասարակությունների հանդեպ արված սպեկուլյացիոն խեղաթյուրում էր, քան ապացուցված փաստ:

Քրիստոսին հավատալու համար ինտելեկտուալ փոխարինողի հետ կապված միակ պրոբլեմը, այսինքն՝ »բարի - իմաստուն ուսուցիչը«, այն է, որ **Նա չի կարող լինել մեկը, քանի դեռ Նա երկուսն էլ է:**

Բարի լինելու համար դու պետք է խոսես ճշմարտությունը: Դու կարող ես լինել անմեղ, դու կարող ես լինել հիմար - անկեղծորեն հավատալ մի բանի, որը սխալ է, - լինել բարի, սակայն ոչ իմաստուն: Իմաստուն լինելու համար դու պետք է ճիշտ լինես. բարի լինելու համար դու պետք է ազևիվ լինես, - նրանց Հիսուսը կարող էր լինել բարի, բայց ոչ իմաստուն, իմաստուն, բայց ոչ բարի, բայց ոչ երկուսն էլ: Ինչո՞ւ:

Հիսուսի մասին պատմությունից ցանկացած աղբյուրում, եթե դուք պատրաստվում եք անվանել Նրան բարի - իմաստուն, դուք պետք է անդրադառնաք Նրա ասածներին - իր գործողություններին: Նշանակություն չունի՝ կդիմեք Ավետարաններին, թե ոչ, քանի որ դրանց են դիմում ընդդիմախոսների մեջ մասը, որոնք որսում - առանձնացնում ու դուրս են հանում որոշակի խոսքեր - առաջ են քաշում դրանք՝ կարմիրով գրված հեռուստահերանին:

Դուք կարող եք տեսնել Ավետարանների Ետ-ի կողմը: Գոյություն ունի Ենթադրական մի »Q« փաստաթուղթ: Վաղ եկեղեցու հայրերից մեկն ասել է, որ Մատթ-ոսը, Քրիստոսի հետ ճանապարհորդելիս, գրի է առել Նրա ասածները ոչ թե հունարենով, այլ իր մայրենի լեզվով՝ արամերենով: Մենք գիտենք, որ Նրա Ավետարանն ամենայն հավանականությամբ գրվել է Անտիոքում - գրվել է հունարեն լեզվով: Արամերենով գրված Հիսուսի այս ասածները կարող են լինել սովորական աղբյուր Նրանց համար, ովքեր կարող են կարդալ հունարեն - տեսնել ոճային փոփոխությունը, ճանաչել այն որպես մի աղբյուր, որն օգտագործվել է Ավետարանն ամփոփող երեք գրողների՝ Մատթ-ոսի, Մարկոսի - Ղուկասի կողմից:

Մենք գիտենք, որ սկզբում գրվել է Մարկոսի գիրքը, ինչը եր-ում է ոճի փոփոխությունից, երբ Մատթ-ոսն ու Ղուկասը օգտվում են Մարկոսից, բայց այդ երեքի Ետ-ում էլ գոյություն ունի մի պարզ աղբյուր, որն անվանվում է Ենթադրական »Q« փաստաթուղթ: Ինձ չի հետաքրքրում, թե դուք կդիմեք իին երգերին, վաղեմի հատվածներին, որտեղ հանդիպում եք Հիսուսին ինչ որ մի բան անելիս կամ ասելիս, որոնք կապված են այդ գրառումներից որ-է մեկի հետ, որտեղ կլինի Զրիստոսի կողմից **ասված մի խոսք կամ ինքնարտահայտման մի նկարագիր**, որ Նա ստեղծել է իրենից, ինչն արգելում է անվանել Նրան »բարի = իմաստուն«, որովհետ- ցանկացած աղբյուրում դուք կգտնեք հետ-յալը.

1.Նա կարծում էր, որ Ինքը կատարյալ է:

Նշանակություն չունի, թե Նա այդպիսին էր, թե ոչ, Նա կարծում էր, որ կատարյալ է: Կարլիսլը ասում է, որ բոլոր մեղքերից առավել՝ գիտակցելն է, որ ոչ մի մեղք չունես: Զկա ավելի արհամարանքի արժանի մի որ-է բան, քան մի մարդ, որը կարծում է, թե երբեք սխալ չի գործել: Այդ գիտակից, ինքնարդարացի, կատարյալ պատկերը մի բան է, որին մենք չենք արձագանքում, քանի որ մարդկության իմաստությունը համակցվում է այն գաղափարի մեջ, որ ոչ ոք կատարյալ չէ:

Այժմ հարցը Նրանում չէ, թե Նա կատարյալ էր, թե ոչ. մենք պարզապես սրբեր չենք սարքում այն մարդկանցից, ովքեր կարծում են, թե կատարյալ են: Աստծո կողմից օգտագործված մարդկանց գրառումներն օգտագործվում են ողջ Հին

կտակարանով մեկ. »Ես արժանի չեմ քո ողորմությունների նվազագույնին ՎՀ Ո՞վ եմ ես, որ առաջնորդեմ հսրայելի զավակներին - Ես ընդամենը մի երեխա եմ: Ես չեմ կարող խոսել«:

Միշտ Աստծո - մարդու կողմից ընդունելության չափանիշը ոչ կատարելության այդ գիտակից վերաբեմունքն է: Սուրբ մարդիկ գիտակցում են, թե որքան հեռավորության վրա են գտնվում Աստծուց: Ողջ արքայության մեջ կար ընդամենը մեկ մարդ, ով տեսել էր Աստծուն. Ոգիա թագավորի մերօք տարում, Եսայիան միակ մարդն էր, ով տեսավ Աստծուն բարձր - Վերացած աթոռի վրա նստած, ինչը նշանակում է, որ Նա ամենքից վեր էր: Նրա առաջին բառերն եին. »Վայ ինձ, որովհետ-կորած եմ«:

Մենք պարզապես չենք սարքում սրբեր այն մարդկանցից, ովքեր կարծում են, թե կատարյալ են, սակայն Յիսուսը կարծում էր, որ կատարյալ էր: Որտեղ էլ որ հանդիպեք Նրան, Նա նշում է դա: Նա դատում է ուրիշներին. »Ավելի հեշտ է, որ ուղտն ասելի ծակով անցնի, քան թե հարուստն Աստծո արքայությունը մտնի«: Նա նայում է օրվա ամենաարդար մարդկանց - ցածրացնում է Նրանց: Պատճառը, թե ինչու ոչ մի մարդ չպետք է դատի, - ով դատավոր է, պետք է ունենա այս զգայուն գիտակցումը, այն է, որ դժվար է դատել ընկերոջ, քանի որ սրտի խորքում մենք գիտենք, որ ունենք նույն սխալները:

Բայց Յիսուսը երբեք չուներ ոչ կատարելության որ-ե զգացում: Նա փոխեց Օրենքը՝ ասելով. »Լսել եք, որ առաջիններին ասվեց, բայց Ես ասում եմ ձեզ«, - հետո՝ իսքևապստահ, բարոյականության կատարելության գիտակցությամբ ասում է. »Մի կարծեք, թե Ես եկա օրենքը քանդելու. Ես չեկա քանդելու, այլ կատարելու«:

Կա մեկ ինարավոր բացատրություն սրա համար, երբ հարուստ երիտասարդ իշխանը եկավ Նրա մոտ - ասեց. »Բարի վարդապետ«: Նա կանգնեցրեց Նրան - ասեց. »Ինչու՞ Ես ինձ բարի ասում«: Նրանք, ովքեր ցանկանում են խոսել Յիսուսի մասին, չհամարելով, որ Նա կատարյալ էր, մատնանշում են այս խոսքին. Նրանք բաց են թողնում շարունակությունը, որովհետ- Յիսուսն ասեց Նրան. »Մի րոպե սպասիր: Մի արի - կոչիր ինձ բարի ռաբբի, բարի ուսուցիչ: Եթե դու պատրաստվում ես ինձ բարի անվանել, նույնպես ճանաչիր, որ միայն Աստված կարող է բարի լինել, այնպես որ մի կցիր այդ անվանումն ինձ առանց ճանաչելու, որ Ես նույնպես Աստված եմ«:

Նա ուներ բարոյական կատարելության այդ զգացումը. բարոյականության պակասի ոչ մի զգացում որ-իցե տեղում երբ-ե չի արտահայտվել իր պահելած-ում:

2. Նա ուներ ողջ իշխանությունը

Նա անգամ ասեց, որ ունի ողջ իշխանությունը. »Եթե կառուցում եք իմ խոսքերի վրա, կառուցում եք ժայռի վրա: Եթե կառուցում եք մեկ այլ բանի վրա, կառուցում եք ավագի վրա: Ինձ է տրված ողջ իշխանությունը Երկսքում - Երկորի վրա«:

Կրկին նշենք արդեն օգտագործված օրինակը, որը Նա ասեց օրենքի վերաբերյալ (այն հաստատվել էր սերունդների կողմից). »Լսել եք, որ առաջիններին ասվեց, բայց Ես ասում եմ ձեզ«: Նա արտասանեց դատն առանց տատանման:

Այժմ մենք այդ տիպի մարդկանցից սրբեր չենք սարգում: Մենք՝ որպես չափանիշ, հարց ենք տալիս. »Ինչի՞ վրա է հիմնված այս իշխանությունը«: Նա հիմնեց դա իր իսկ վրա. »Բայց Ես ասում եմ ձեզ«:

3. Նա իրեն համարեց տիեզերքի կրոնների կենտրոնը

Նա ավելի խորացավ – իսքև իրեն դրեց տիեզերքի կրոնների կենտրոնում: Յիսուսը չեկավ քարոզելու իրենից զատ մի որ-է դոկտրինա կամ ճշմարտություն: Նա ասեց. »Ես եմ ճանապարհը: Ես եմ ճշմարտությունը: Ես եմ կյանքը: Ինձանով է ամեն մարդ մտնում Ես եմ դուքը: Եթե մեկն ինձ մոտ գա, – չափի իր հորը – մորը, կնոջը – որդիներին, – եղբայրներին – քույրերին, – հենց իր անձին էլ, – ով որ իր խաչը վեր չառնի – իմ ետ-ից գա, նա չի կարող իմ աշակերտը լինել«: Նա կառուցեց ձեր փոխհարաբերություններն իր հետ, դնելով իրեն տիեզերքի կրոնների կենտրոնում՝ որպես բոլոր կրոնական շահերի սահմանող:

4. Նա խոսում էր հավեռժության մասին ներսից

Գոյություն ունի ձեր տանը քաջատեղյակ լինելու տեղեկությունների որոշակի կառուցվածք: Օրինակ ես ասում եմ. »իմ տան թախտը բաց շագանակագույն է«, – դուք չեք ասի. »Որտեղից գիտես«: Մենք խոսում ենք տան մասին »ճանաչելով այն« – դա հենց այդպես է գալիս: Մենք չենք վիճում, մենք ակնկալում ենք, որ մեզ կիավատան: Դա հենց այն տեղեկությունների կառուցվածքն է, որոնց պատկերում է Յիսուսը, երբ խոսում է հավեռժության մասին: Փաստորեն, Նա ասում է. »Ես վերադառնում եմ: Ես գնում եմ ձեզ համար առանձնատուն պատրաստելու: Եվ որոշ ժամանկ անց Ես կգամ – կվերցնեմ ձեզ ու կտանեմ այստեղ«:

Փաստորեն, Նա նորից ասում է. »Նախքան Աքրահամի լինելը Ես կայի «: Կամ նորից. »Ես տեսա Սատանային, երբ Նա վայր գցվեց «: Կամ նորիկց. »Ճրեշտակները պար են բռնում մեղավորը ապաշխարհելուց«: Մեզ հավաստիացրեց հայտնելով իր »Ներքին իմացությունը« Երկնքի »Ներսում« Աստծո հետ հավեռժության – աշխարհի գույություն ունենալուց առաջ – հետո:

5. Նա պետք է մահանար, փրկագինը:

Նա ասեց, որ ինչ-որ մի բան սիսալ է ամբողջ աշխարհում, ինչը կարող էր միայն շտկվել իր մահով. փրկագին այն ասպարեզում, որտեղ կոնկրետ գիտեին, թե ինչ է փրկագինը: Փրկագինն այն էր, ինչ վճարում էին կորցրած ժառանգությունը վերականգնելու համար, իրենց սիսալի պատճառով որ-է մեկին մահվան դատապարտությունից ազատելու համար: Դա այն գինն էր, որը վճարվում էր անհաջողության, սիսալ արարթների, ժառանգության կորստի հետ-անքներից ազատվելու համար, – փրկագինը վերականգնում էր բեզ համար այն ամենը, ինչ կորցրել էր: Նա ասեց, որ ողջ աշխարհը կորստի էր մատնվել, – ինքը եկավ, որ մահանա – վճարի փրկագինը նրանց ազատելու համար:

6. Նա պետք է հարություն առներ

Նա ասեց, որ հարություն կառնի (սրանից շատ ավելի բաներ կային, բայց Ես շատ քիչ բան եմ ընտրում, պարզապես շատ հավաքական), որ երբ Նա մահանա, հարություն կառնի մեռելներից:

Այժմ, եթե Ես, Եկեղեցու հովիվ մոտենաի տաճարի բեմին – վերցնեի բարձրախոսն ու ասեի. »Ինձ է տրված ողջ իշխանությունը Երկնքում – Երկրի վրա«, դուք

կմտածեիք, որ գուցե հովիվն պատրաստվում է նշել, »որ իմ ձեռքերի մեջ է հանձնվել Աստծո այս խոսքը, որ քարոզեմ իշխանությամբ«: Այսպիսով դուք կմտածեիք, որ հովիվը շեշտադրում է այն խոսքը որը կարդում է:

Եվ եթե այսուհետ- ես շարունակեի - ասեի. »Ահա ես, Յայր: Ես արեցի այն ամենը, ինչի համար դու ուղարկել եիր ինձ: Իմ մեջ չկա ոչ մի թերություն, ոչ մի անկատար բան: Օրենքը չի անհանգստացնում ինձ, ես կատարել եմ այն«, - սկսեի Յիսուսի նման պատկերել մի կատարելություն, դուք կույսեիք ետ-ետ գնալ - կարեկցանքով նայել իմ կոնջը: Եվ եթե ես շարունակեի. »Ձեր հավերժության ճակատագիրը կախված է նրանից, թե կինքը ինձ ձեր կյանքի կենտրոնում - ձեր տերը կդարձնեք ինձ, թե ոչ«, մինչ այդ դուք նրան արդեն կը նդիմատեիք ինձ: Չեմ կարծում, որ ես կասեի այն, ինչ ես այստեղ չեմ ներառել, որ ես կուգենահ ստիպել ձեզ մտածել, որ ես հավերժության բնակիչ եմ:

Եվ ես կկանգնեի այստեղ - կասեի ' ոչ թե հոգ-որ արտահայտություններով, այլ սպասելով, որ ինձ կհավատան. »Նախքան Աքրահամի լինելը ես կայի: Դուք գիտեք, այն մարդը, որ Ուր քաղաքից դուրս եկավ. ես այստեղ եի: Ես տեսա Սատանային, երբ նա Վայր զցվեց նախքան Աղամի ստեղծվելը«: Իսկ հետո ես կիսում երկնքի մասին այնպես քաջատեղյակ, ինչպես մենք խոսում ենք մեր տների մասին: Եթե ես ասեմ, որ իմ տան թախտը բաց շագանակագույն է, - դուք ասեք. »Որտեղի՞ց գիտես«, ես կմտածեմ, որ դուք խելագարվել եք:

Այսպես խոսող մարդկանց տեղադրում են հոգեբուժարան: Եվ այսուհետ-, եթե ես ասեի, որ ես ինչ-ինչ ձ-ով փրկագին եմ հանդիսանում, ապա ինչոր մեկը կոզմեր իմ կոնջը ձեռքը դնել ինձ վրա քանի դեռ ամբողջովին չեմ խելագարվել:

Եթե մի պահ կանգնենք - գիտակցենք, որ Ջրիստոսը, որը հօչակումեր անհնարին բաներ իրեն մասին միակն է, ով քայլում էր պատմության եջերով - միակն է իր իսկ եռաթյամբ, ում դուք կարող եք գտնել աղբյուրներում: Դուք չեք տեսնի մյուս կրոնների հիմնադիրներին այս բաներն անելիս:

Բուդդան երբեք չէր կարծում, որ ինքը կատարյալ էր. նա պայքարում էր *տաևյայի* բնահյութի հետ, ինչը նրանց համար նշանակում էր մեղքը ծնող այլասերված ցանկություն: Նա վիստրում էր մտքի ազատության ուղին. նա վիստրում էր եսթետիկական յոգայի ուղին, - ոչ մեկն էլ չգործեց: Նա եկավ ութաստիճան ուղուն, որը բերեց նրան տրանսի վիճակին, որտեղ նա կորցնում էր իր կյանքի հետ ունեցած գիտակից նույնությունը, որն անվանվում է *Նիրվանա*: Եվ երբ դուրս եկավ այդ վիճակից, նա առաջարկեց իր հետ-որդների այդ ութաստիճան ուղին, - այն ամենը, ինչ նա ասեց, սա է. »Դա գործեց ինձ մոտ: Փորձեք. դա ձեզ մոտ է կստացվի:«

Նա երբեք չի մտածել, որ ողջ իշխանությունը տեղադրված է իր ներսում: Ընդհակառակը՝ նա ասում էր իր աշակերտներին (- դա նրանց եռամաս գրվածքի մի մասն է կազմում), որ արժանի չէ նրանց առաջնորդելու համար: Այն ամենը, ինչ նա թողեց նրանց, դա այն միջոցն էր, թե ինչպես ստացվեց դա իր մոտ: Իշխանության ոչ մի ենթադրություն տեղադրված չէր նրա մեջ: Նա երբեք չէր մտածում, որ տիեզերքի կրոնների կենտրոնն է: Այն միջոցը, ստացվեց: Նույնը մնացած բոլորի մոտ է:

Յիսուսը չի կարող պարզապես լինել »բարի - իմաստուն ուսուցիչ«, քանի դեռ Նա երկուսն էլ չէ: Ունենալով այն, ինչ Նա ասեց իր մասին՝ Նա չէր

Կարող լինել բարի, եթե Նրան ամբողջովին չհավատային - Նա չէր կարող լինել իմաստուն, եթե դա ճշմարտություն չլիներ:

Մուհամեդը երբեք չէր կարծում, որ կատարյալ է: Նա Աստծո՝ Ալլահի մարգարեն էր: Նա ուներ հավերժության մասին տեսիլքներ, որոնք ազդեցին անապատի մարդու վրա, բայց նա երբեք չէր պնդում, որ եղել է այստեղ: Նա երբեք չմահացավ, որ ինչ-որ մեկի համար փրկագին հանդիսանա: Նա իշխանության մեկ չափանիշ ուներ. Աստված հայտնել է դա Նրան տեսիլքով: Յիսուսը երբեք չէր մատևանշում տեսիլք այնպես, ինչպես կասեր մարգարեն. »Տերև ասեց...«: Յիսուսն ասեց. »Ես ասում եմ:«

Կոնֆուցիուսը կատարեց հասարակության տրամաբանական անալիզը – նշեց, որ այդ արտաքին անալիզը հանդիսանում է իր իշխանությունը:

Մյուս առաջնորդներից ոչ մեկն իրեն չդարձրեց տիեզերքի կոռոների կենտրոնը, չտեղադրեց իշխանությունն իր վրա, չուներ կատարելության գիտակցումն իր հանդեա, չէր պնդում հավեռժության նույնությունը այստեղ՝ երկրի վրա իր ժամանակավոր կեցությունից առաջ – հետո: Այս գծերից ոչ մեկը չէր պատկանում մյուսներին: Ահա թե ինչու դուք կարող եք հարգել Նրանց որպես հիմնադիրների:

Յիսուսի հետ դուք ունեք այն, ինչ Ս. Ս. Լյուիսն անվանում է »ապշեցուցիչ տարբերակ«: **Կամ** նա մտածում էր, որ այս բաները ճշմարիտ են, բայց չափազանց հիմար էր, որ իմանար, թե մարդու համար անհնար էր կատարել այս պահանջները, – այսպիսով Նա չէր կարող լինել իմաստուն, **կամ ել** Նա իմաստուն էր, իմանալով, որ այս բաները ճշմարիտ չեն, բայց ունակ էր հիմարացնել իր հետ-որդներին՝ իրեն ծառայեցնելու դրդապատճառներից ելնելով, որ հավատային իրեն, – սա դարձնում է Նրան ոչ բարի: Եզրակացությունն այն է, որ Նրանք, ովքեր ասում են, որ Նա »բարի – իմաստուն ուսուցիչ« էր, բացահայտում են, որ իրականում երբ-իցեւ չեն հանդիպել միակ Ջրիստոսին, որն երբ-է քայլել է պատմության Էջերով:

Ս. Ս. Լյուիսն ասում է, որ դուք ունեք այդ »ապշեցուցիչ տարբերակը«: Դուք կամ պետք է դիտեք Ջրիստոսին որպես մեկին, ով իրեն համարում էր »վերին արտիցորեն«, կամ պետք է ընդունեք Նրան որպես այնպիսին, ինչպիսին որ Նա ներկայացնում է իրեն, – եթե Նա Աստված է, ապա Նա կատարյալ է, – իշխանությունն իսկապես Նրա ներսում է, – Նա է տիեզերքի կոռոների կենտրոնը, – Նա իսկապես ուներ այն բոլոր հատկանիշները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մահանար ամբողջ աշխարհին փրկագին դառնալու համար: Նա իսկապես գիտեր հավերժության մասին, – Նա կրկին հարություն կառնի /- առել է/:

Դուք չեք կարող Յիսուսին դնել »բարի – իմաստուն« անհամ ուսուցչի կաղապարի մեջ – մոռանալ Նրա մասին: Նա կամ հիմար է, կամ կեղծ, կամ ել Նա այն է, ինչ որ պետք է լիներ:

Դե, երբ ես հասա այդ խաչմերուկին, որոշեցի, որ ինքս ինձ համար կպարզեմ դա: Խնդիրը պտտվում է պատմության այս փաստի շուրջը: Յիսուսն ասեց ումանց, ովքեր նշան էին ուզում. »Ես կտամ ձեզ այն«: Գոյություն ունի միայն մեկ Երաշխավորված նշան, որի վրա կարող է կառուցված լինել հավատքը: Աստված հայտնապես անցել է այս Երաշխավորումից, բայց միակ նշանը, որն Աստված Երաշխավորեց, դա Յովնանի նշանն էր, որը Յիսուսը մեկնաբանեց որպես Ջրիստոսի մահն ու հարությունը:

Մի կողմից, պատմության ընդարձակ հոսքի մեջ մի **ՓԱՍՏ** է հայտնվում: Աստված բարեհաճեց տեղաշարժվել մարդկային մարմնի այս վրանի մեջ, կատարել օրենքը, որպեսզի այս մարմսավորվի, այսուհետ- ընտրեց մահը մեր փոխարեն՝ որպես փրկագի վարձք, այսինքն, կատարեց օրենքը, որ Նա կարողանար կրկին հարություն առնել - որդեգրել մեզ իր ընտանիքի մեջ իր նոր կյանքով՝ առանց օրենքի կապանըների, ինչը պարզապես դպրոցի դասատու էր, որը սովորեցնում էր մեզ Աստծո մատակարարող զորության մեր կարիքի մասին:

Այն, որ Նա տեղաշարժվեց պատմության եջերով, քրիստոնեության պնդումն է, - Նա արդարացրեց իրեն մի **ՓԱՍՏՈՎ**, որը կարելի է անալիզի ենթարկել:

Այժմ դա **ՓԱՍՏ** է, որ գոյություն չունեն պատմական անտարակուտելի փաստեր: Ես իմ ավարտական աշխատանքը հիմնականում արել եմ պատմությունից: Պատմական անտարակուտելի փաստ նշանակում է, որ ապացույցի ամեն մի հնարավոր կտորը պետք է լինի այստեղ: Այն, ինչ դու կարող ես ըմբռնել որպես հնարավոր ապացույց, պետք է լինի այստեղ, որպեսզի ունենանք պատմական անտարակուտելի փաստեր: Այն պահին, երբ մի իրադարձություն անցյալում է մտնում, - վերջ, դու կորցնում ես այս ակնհայտ տեսնելու հնարավորությունը: Լուսանկարչական ապարատներն օգնում են, ինչպես Ռոդինյ թագավորի դեպք ցույց տվեց, բայց կորում է մի մասնիկ, այսպես որ, պատմական անտարակուտելի փաստերի սահմանումը հարաբերական է: Զո ողջ հույսը կարող ես դնել միայն հոգեբանական անտարակուտելի փաստերի վիճ, որտեղ պատշաճ պատմական փաստերին կից, որոնք մատչելի են, առաջանում է հոգեբանական ռեակցիա, - անհնար է չունենալ այդ ռեակցիան:

Յանկացած խելացի իրավաբան գիտի, որ դատարանի դահլիճում չկա մի իրավաբան, որն ասում է մի բան - դատավորը կշտամբում է նրան, որ իրավաբանը գիտի դա նախքան իր ասելը, որ Նա չպետք է ասեր դա. Նա ուզում է, որպեսզի հանձնաժողովը լսի դա: Եվ դատավորը գոռում է իրավաբանի վրա, - Նա ասում է. »Այո, Ձերդ արժանապատվություն«, - խաղում է իր փոքրիկ համեստ դերը: Նա կոնկրետ գիտի, թե ինչ է անում: Իսկ հետո դատավորը Հոռմի պապի տեսքով նայում է հանձնաժողովին - ասում է. »Հեռացրեք դա ձեր քննարկումից«: Լավ, ՀԱՐՎԱԾՈՒՄ Է ՄՈՒՇԸ: Սա եր-ի միակ միջոցն է, ինչպես կարելի է հեռացնել դա. դա այդպես է: Եվ դու տեսնում, լսում - զգում ես, ու ինչ ապցույց ել որ լինի, դու ռեակցիա ես ունենում:

Աստված արդարացրեց իր Որդուն հարության միջոցով:

Պողոսը գալիս է Արիսպագոս. այստեղ հավաքված էին փիլիսոփաները՝ փորձելով հաշվել բոլոր աստվածներին, նրանք այնքան են մտահոգվում, թե բաց կթողնեն մեկին, որ Անծանոթ Աստծո արձան են դնում: Նա բաց չի թողնում դա՝ որպես Քրիստոսի մասին խոսելու առիթ: Նա ասում է. »Ես կպատմեմ ձեզ, թե ով է Անծանոթ Աստվածը«, - քարոզում է Քրիստոսի մասին ու ասում, որ Աստված հաստատեց Նրան հարությամբ: Պողոս ասեց, որ Եթե չկա հարություն, զուր է մեր հավատքը, - մենք դառնում ենք Աստծո կեղծ վկաները, քանի որ մենք վկայել ենք Նրա մասին, թե Նա հարություն է տվել Քրիստոսին:

Եկեղեցու առաջին ուղերձը Պենտեկոստի օրը Պետրոսի քարոզն էր. »Այն Հիսուսը, ում դուք ճանաչում եք«: Եվ Նա նշեց այն փաստը, որ նրանք գիտեին, որ Նա խաչվել է. նրանք նույնպես գիտեին դա: Այսուհետ- Նա վկայեց այն բանի մասին, ինչ նրանք չգիտեին. »Այդ Հիսուսը, որին Աստված հարություն տվեց, ինչի վկաներն ենք մենք բոլորս«, - Նա ներկայացրեց այդ արդարացնող փաստը:

Պողոսն ասում է իր ելույթներից մեկում. »Նա եր-աց – Նա եր-աց«, – Նա թվարկում է վկաներին – գալիս է բազմության մոտ – ասում է միանգամից մոտ հինգ հարյուր եղայներին:

Այդ օրերին դուք կարող եք հավաքել ականատեսների. բայց ոչ այսօր: Սակայն, ինչպես ցանկացած պատմական փաստ, ումիցեւ գրել Շեքսպիրը Յուլիոս Կեսարի գոյության մասին, դուք նույնպես կարող եք փնտրել պատմության այս ՓՂԱՍԸ, որի վրա հիմնված է քրիստոնեությունը, այս է.

Յիսուսը դուրս եկավ գերեզմանից:

Եվ կառուցվածքը հաստատելու համար ես կասեմ, որ եթե Զրեյգ Լեյմփը կամ եղ Մեսրին կամ ուրիշ մեկը մտնեին տաճար՝ իրենց մասին Յիսուսի պնդումներն անելով, ես կներկայացնեի մի առաջարկ, որ իրենց անհրաժեշտ է հանձնել պսիխոնալիզ – գնալ բուժարան. մինչ – ես չտեսնեի նրանց աքերի միջի փայլը, որն ուղղված էր ինձ, քանի որ ոչ մի մահկանացու մարդ չի կարող անել այս պնդումները:

Բայց եթե իրենց պնդումներում նրանք ասեին. »Սպասեք ինձ – երեք օրից ես դուրս կգամ գերեզմանից – երկինք կիամբարձվեմ«, ու երեք օր անց նրանք դուրս գային գերեզմանից – երկինք համբարձվեին, ես այլ աչքերով կսայեի Դ-ր Լեյմփին ու նա-Եղին: Եվ իմ հավատքի հիմքի համար այլ-ս ոչ մի բանի կարիք չէի ունենա. ինձ պետք չէին լինի Երրորդությանը Վերաբերվող բոլոր այդ հերիաթային փիլիսոփայական դոկտրինաները:

Եթե ես կարողանամ պատմության եջերում գտնել Մեկին, ում խոսքերի ուսումնասիրության վրա կարող եմ անցկացնել ողջ կյանքս, ով կատարյալ էր, բոլոր իշխանությունների կենտրոնը, տիեզերքի կրոնների կենտրոնը, – բոլոր նմանատիպ բաները՝ Ներառյալ ինձ համար փրկագին վճարելը, ով հարություն առավ – հավերժության մեջ առանձնատուն պատրաստեց, դա ամբողջությամբ այն կատարելու է, ում կարիքը ես ունեմ: Ես կարող եի սկսել հենց այդտեղից:

ԽՆԴԻՐԸ ՅԵՏԵՎՅԱԼՆ Է. ՆԱ ԴՈՒՐՍ ԵԿԱ՞Վ ԳԵՐԵՉՍՍՆԻՑ:

Դուք չեք պարզի դա՝ դրա մասին մտածելով. հարկավոր է հետազոտել դա: Այժմ ինչ-որ մի բան հետազոտելու համար հարկավոր է ունենալ հիմնարար փաստը: Շատ մարդիկ աղոտ մտածելակերպ ունեն. Նրանք պնդում են, որ հարություն տեղի չի ունեցալ, որովհետ- այս չի կարող տեղի ունենալ, – յուրաքանչյուրը, ով ասում է, թե դա եղել է, պետք է որ սուս խոսի: Ցանկացած այլ փաստ՝ – դա հետազոտվում է:

Շատ մարդիկ աղոտ մտածելակերպ ունեն. Նրանք պնդում են, որ հարություն տեղի չի ունեցալ, որովհետ- այս չի կարող տեղի ունենալ – յուրաքանչյուրը, ով ասում է, թե դա եղել է, պետք է որ սուս խոսի: Յարցրեք նրանց մի քանի հարց – կտեսնեք, որ նրանք իրենց ողջ կյանքի ընթացքում անգամ 15 ժամ չեն անցկացրել պատմության ամենակար-որ իրադարձությունը հետազոտելիս:

Եթե դուք հարցնեք. »Սկսուտն այս ուղերձը մեկ ժամվա ընթացքում քարոզեց 1992թ-ի ապրիլի 19-ին«, դուք պետք է ենթադրեք, որ ես ընդհանրապես այստեղ էի – քարոզում էի: Դուք պետք է ենթադրեք, որ գոյություն ուներ տաճարը: Դուք պետք է ենթադրեք, որ ապրիլի 19-ը եկավ – անցավ: Մենք չենք քննակում դա. Մենք որոշ բաներ որպես անառարկելի ճշմարտություն ենք ընդունում: Բայց

Նախքան դուք կսկսեք վիճել, թե ես քարոզում եի մեկ ժամ (թե ավելին), եկեք գոնե համաձայնեք, որ ես քարոզում եի: Ձեզ պետք չի համաձայնվել՝ արդյոք դա լավ էր, թե ոչ, այլ որ ես այստեղ եի – իմ բերանը շարժվում եր – ինչ-որ բաներ եր ասում: Դա հայտնի է որպես տեղեկությունների շոշանակ՝ ինչն ընդունվում է որպես անառարկելի ճշմարտություն:

Եվ եթե ինչ-որ մեկն ասում է. »Օ, ես չեմ հավատում, որ դու այստեղ եիր«, ապա ու՞մ են պետք քննարկման ժամերը: Շատ ավելի հեշտ է ապացուցել, որ ես այստեղ եի, գուցե ոչ բոլոր այն տեղերում, քայլ այդտեղ, քան ապացուցել, թե որքան ժամանակ եի ես քարոզում, քանի որ դուք դեռ չգիտեք, թե ես երբ եմ սկսել: Դա ներածական դիտողություններն եին: Դա առաջին նի՞շն էր գրատախտակի վրա: Դա ավելի քննարկելի է, քայլ ապացուցել՝ արդյոք ես ընդհանրապես այստեղ եի, թե ոչ, մի փոքր ավելի հեշտ է:

Դուք պետք է մոտենաք հարության հարցին նույն ձ-ով: Գոյություն ունեն որոշակի փաստեր, որոնց պետք է ենթադրել, նախքան դուք կսկսեք քննարկել հարությունը: Մեկը սա է. Յիսուսն ընդհանրապես ապրել է: Ինչու՞ ենք մենք խոսում, թե Նա հարություն է առել, եթե չենք հավատում, որ Նա ապրել է: Կար ժամանակ, որ դա քննարկվում էր. քայլ այժմ այդքան էլ չէ: Այսօրվա նպատակների – հարության վերաբերյալ ցանկացած իմաստալից քննարկման համար դուք գոնե պետք է ենթադրեք հետ-յալը.

Փաստ 1. Որ Յիսուսն ապրել է:

Եթե դուք չեք հավատում, որ Յամաձա՞յն եք, որ գուցե ավելի հեշտ է ապացուցել, որ Նա ապրել է ինչ-որ տեղ, ինչ-որ մի ժամանակում, քան որ Նա մահացել – կրկին հարություն է առել: Դուք համաձա՞յն եք դրա հետ: Այսպես որ, տվեք ինձ ավելի հեշտ խնդիրը:

»Դե, ես համոզված չեմ, որ Նա ապրել է, այսպես որ մի խոսք ինձ հետ հարության մասին«: Ես ավելի շատ ժամանակ ունեմ ուրիշ բաներ անելու, քան դրա համար: Մի մտք հարության մասին ցանկացած վեճի մեջ այն մարդու հետ, ով չի հավատում, որ Յիսուսն ապրել է: Դա հեշտ է ապացուցել. մինչ– դա չի պարզվում, մի անցեք մյուսին:

Փաստ 2. Որ Նա խաչվել է որոշ հրեա առաջնորդների սադրանքով Եռուսաղեմում: Յռոմեացիներն իրամայեցին – իրագործեցին մահավճիռը:

Որոշ հրեա առաջնորդների սադրանքով՝ ոչ բոլոր հրեաների. Նրանց պետք չի մեղադրել դրա համար. Նրա աշակերտները հրեա եին՝ միայն որոշ հրեա առաջնորդների, որոնք յռոմեացիների ծեռքերում եին: Յռոմեացիներն իրագործեցին մահավճիռը. հրեա առաջնորդները դրդեցին դրան: Մինչ– չի հավատաք դրան, իմաստ չկա անցնել հարությանը: Ավելի հեշտ է ապացուցել խաչելությունը, քան հարությունը:

Փաստ 3. Որ Նրան համարեցին մահացած:

Ուշադրություն դարձրեք, որ ես ասեցի *համարեցին* մահացած, որովհետ- բազում մարդիկ հավատում են, որ Նա դուրս է եկել գերեզմանից՝ հարություն է առել: Նրան համարեցին մահացած. սրով խոցված, խաչից հշեցված, գերեզման տարված: Իհարկե, մի տեսություն, որը ծագում է մի հորինվածքից, որ Նա փորձարկել էր սա – ուներ մարդիկ, որոնք կտանեին Նրան գերեզմանց,

իմանալով, որ Նա դուքս ե գալու: Նա սկզբում փորձեց Ղազարոսի վրա (այդպես է ընթանում թեորեան), բայց, իհարկե, Ղազարոսն արդեն հոտում էր՝ մինչ Նա կսկսեր փորձարկելը, սակայն դա մի գեղեցիկ իրական թեորեա է: Որո՞ թեորեաներ խելքից դուքս են ավելի շատ, քան հարության փաստն ընդունելը, բայց նվազագույնը՝ Նրան համարեցին մահացած:

Փաստ 4. Նա թաղվեց հայտնի, մատչելի գերեզմանոցում:

Մատչելի ասելով՝ ես նկատի ունեմ, որ դուք կարող եք գնալ այդ գերեզմանոցը. դուք չեք կարող ներս մտնել քարի – պահակների պատճառով, բայց դա հայտնի, մատչելի գերեզմանց էր:

Փաստ 5. Այսուհետ- քարոզվեց Նրա հարությունը:

Այս կետում ես չեմ ասում, որ Նա հարություն առավ, այլ որ քարոզվեց Նրա հարությունը, գերեզմանը դատարկ էր, – Յիսուսը համբարձվեց: Կարո՞ է հիշել, որ ողջ քարոզը ներառում էր. դատարկ գերեզման, մեռելներից հարություն – Երկինք համբարձում: Ահա – ողջ ուղերձը:

Այժմ, եթե դուք չեք հավատում, որ Նա քարոզվեց, ես այսօր դա եմ անում: Բայց Նա շատ ավելի շուտ քարոզվեց. Եթե դուք չեք հավատում դրան, ավելի հեշտ է ապացուցել դա, քան հարությունը:

Փաստ 6. Յրեա առաջնորդները, որոնք սադրեցին Նրա խաչելությունը հետաքրքրված եին Նրա հարության փաստը հակառակ ապացուցելու մեջ քան մենք այսօր:

Առողջ բանականությունը կասի ձեզ, որ իրեա առաջնորդները, ովքեր սադրեցին խաչելությունը, ավելի եին հետաքրքրված հարությունը հակառակ ապացուցելու մեջ, քան ինչ-որ մեկը 2000 տարի անց՝ բանականորեն մոտենալով դրան – խառնելով դրան շատ սկեպտիցիզմ, քանի որ իրեա առաջնորդների բարի անունը – հացն ու յուլը – կյանքերը վտանգի եին Ենթարկված:

Եթե Նրանք սադրեցին Նրա խաչելությունը՝ մեղադրելով Նրան, որ փորձում էր հաստատել մի թագավորություն, – մեղադրելով Նրան Աստծուն հայիոյելու մեջ, – հանկարծ պարզում է, որ ճիշտ է, թե Նա հարություն է առել մեռեներից, Նրանք պատրաստվում են շուտով նոր աշխատանք փնտրել: Այսպիսով առողջ բանականությունն ասում է, որ Նրանք ունեին ավելի շատ հոգեբանական հետաքրքրություն թեորեան հակառակ ապացուցելու մեջ, – մի փոքր իրենցից ավելի շատ դուքս կգային, քան շատ մարդիկ Չատկի կիրակի օրը:

Փաստ 7. Աշակերտուները հալածվում եին հարության մասին քարոզելու համար:

Նրանք սարսափելի ձ-ով հալածվում եին քարոզելու համար՝ սկսած այն իրեա առաջնորդներից, որոնք առաջինն եին հալածում Նրանց. սկզբում Նրանք անվանեցին Նրանց ստախոսներ, ասեցին, որ գողացել են այն: Ամբողջ Գործք Առաքելոցը պատմում է հալածանքի մասին, ինչը հարությունը քարոզելու համար էր:

Այսուհետ-, դարեր անց, քրիստոնյաներն ընդիանրապես դարձան Յօնոմեական Կայսրության միջի չարիքների թիրախն ու դարձան քավության նոխազ – պարզապես պատժվում եին այլ պատճառներով, սակայն ցանկացած գրվածք

համաձայնում է, որ վաղ հալածանքները կարող եին անմիջապես կանգնեցված լինել, եթե նրանք դադարեին քարոզել այս հարության ուղերձն ու համբարձումը - Հիսուսին ուղեկցող հրաշքները: Ահա թե ինչու եին նրանք հալածվում, որովհետ-հրեա առաջնորդների բարի անունը Վտանգի էր Ենթարկված: Այսպիսով՝

Փաստ 8. Գերեզմանը դատարկ էր:

Այս ամենը բերում է այն փաստին, ասում է առողջ բանականությունը, որ քանի որ հրեա առաջնորդները, որոնք սադրեցին խաչելությունը, ունեին չափազանց մեծ հետաքրքրվածություն իրենց ապրելամիջոցի Վտանգված լինելու պատճառով, - **քանի որ** Նա թաղվեց հայտնի, մատչելի գերեզմանոցում, նրանք անմիջապես կգնային այդ գերեզմանոցը - կիայտնաբերեին մարմինը: Ահա թե ինչու է ակնհայտ, որ գերեզմանը դատարկ էր:

Գերեզմանը ոչ նշանակալից էր դարեր շարունակ. շատ դարեր անցան: Գերեզմանը կորած էր պատմության համար, որովհետ- **դրա մեջ մարմին չկար:** Այնուհետ-, երբ սկսվեց տարածվել սրբերի ժամանակաշրջանը, մարդկանց սկսեց հետաքրքրել Նա գերեզմանը, որը հետաքրքրություն չէր ունեցել, քանի որ դրա մեջ մարմին չկար, - փորձեցին գտնել այս:

Եկ համաշխարհային Եկեղեցին դեռ այսօր պայքարում է վաղեմի պատմական Եկեղեցիների կլասիկ տեղի շուրջ, - Գորդոնի գերեզմանոցի համար, որը բողոքականներից շատերը նույնացնում են պարզապես ավտոբուսի կանգառի հետ՝ տեղադրված »Գողգոթա« կոչվող ժայռի զարիթափից Ներք-, որի գագաթին կա մի արաբական գերեզմանատուն: Պայքարի պատճառն այն է, որ գերեզմանոցը կորած էր պատմության համար. դրա մեջ մարմին չկար:

Այժմ, ավելի հեշտ է ցուցադրել այս փաստերը, քան հարությունը, բայց միևնունվեն այս փաստերը, դուք չեք կարող գործ ունենալ հարությանը վերաբերվող բոլոր թերուեաների հետ: Օրինակ՝ քարոզն այնքան արդյունավետ էր, որ բոլոր դարերից հայտնակում են մարդիկ՝ իրենց թերուեաներով այն բացատրելու համար: Այժմ, պատճառը, թե ինչու եմ ես անում սա ամեն Չատիկին, այն է, որ ես փորձում եմ ցուցադրել, որ ձեզ պետք չի կանգնեցնել ձեր ուղեղը Եկեղեցու դռան մոտ, երբ դուք ներս եք մտնում:

»Յավատքը լսելուց է, - լսելը՝ Աստծո խոսքից«: Դուք պարզապես չեք ստիպում մարդկանց հավատալ, Բայց եթե դուք ձեզ որպես օրինակ եք ցուցադրում, ինչ-որ մի քան կատարվում է ներսում - տեղի կունենա հոգեբանական ռեակցիա: Իմ վեճն այն մարդկանց հետ, ովքեր հերքում են հարությունը - վարում են մի ապրելակերպ, որը ոչ մի ուշադրություն չի դարձնում դրա վրա, կայանում է նրանում, որ ես կարող եմ տալ նրանց 15 հարց - գտնել, որ նրանք չեն անցկացրել իրենց կյանքում 15 ժամ՝ նայելով դրան:

Եթե հարությունը ճշմարտություն է, սա տիեզերքի կենտրոնն է: Եթե սա ճշմարտություն է, սա պատմության կենտրոնն է: Պետք է լինել մարդկության բոլոր հիմարներից ամենահիմարը, որպեսզի չմտածել, որ արժե ուսումնասիրել դա գունե 30 ժամ ողջ կյանքի ընթացքում: Սակայն աշխարհում կան շատ խելացի մարդիկ, ովքեր նայել են - համոզված դուրս են Եկել: Ահա թե ինչու եմ ես անում սա: Բայց քարոզներն այնքան անկեղծ են իրենց բնույթով: Բոլոր տեսակի թերուեաները լայնորեն ընսարկվել են, բայց թերուեաները չեն անցնի, եթե դուք հաշվի առնեք այս ութ փաստերը:

Թեորեա 1. Աշակերտները գողացան մարմինը:

Թեորեա 2. Հրեա առաջնորդները գողացան այս:

Թեորեա 3. Հռոմեացի առաջնորդները գողացան այս:

Թեորեա 4. Կանայք սխալ գերեզմանց գնացին:

Դուք գիտեք, որ մութ էր – Նրանք կորան զբոսնող կանանց նման՝ Նրանց մոտ ոչ թե վարորդ, այլ զբոսնող կանայք էին: Նրանք գնացին դեպի սխալ գերեզմանց – հավատացին, որ Նա հարություն է առել, ես նկատի ունեմ, Նրանք դուրս վազեցին պարտեզից ճչալով ու աղաղակելով. »Մենք գնացինք, – Նա այստեղ չեմ«: Նրանք գնացին սխալ գերեզմանց. Նրանք գնացին մի դատարկ գերեզմանց, որը սպասում էր ինչ որ մեկին:

Թեորեա 5. Այդ ամենը հայուցինացիաներ էին:

Փառավորված ցերեկային երազներ: Նրանք անկեղծ էին. Նրանք հավատում էին, որ այս ամենը տեղի է ունեցել, քանի որ Նրանք ունեին այս բոլոր հայուցինացիաները:

Թեորեա 6. Վերակենդանացման թեորիա:

Նա խաչվեց, – Նրան մեռած համարեցին, – Նրան թաղեցին հայտնի գերեզմանոցում, սակայն Նա մեռած չէր, – գերեզմանցի սառը պայմաններում Նա վերակենդանացավ – դուրս եկավ՝ գերեզմանի շորերի մեջ փաթաթված, – փառք Աստծուն, պահանձերը քնած էին, – Նա ճանապարհից ետ հրեց այդ քարը՝ – ահա գալիս է ֆրանկենշտեյնը:

Թեորեա 7. Աշակերտները ստեցին:

Նրանք հորինեցին ողջ պատմությունը: Նրանք գրագ եկան սխալ ձիու վրա – չեին կարող համակերպվել դրա հետ, այնպես որ հորինեցին այս ամբողջ պատմությունը, – Նրանց պահանջվեց յոթ շաբաթ, որպեսզի հաշվարկեին դա, – այսուհետ – պատմեցին այն:

Թեորեա 8. Այդ ամենը ճշմարտություն է:

Նրանք ճշգրտորեն պատմում են այն, ինչ զգացել – տեսել են: Այժմ, հենց որ դուք հասնում եք ապշեցուցիչ տարբերակին, երբ ընդունում եք միակ Յիսուսին պատմության մեջ, որ Նա կամ խենթ, հիմար, խարերա էր, կամ Նա այն էր, ինչ ասում էր, որ կա, – դա պահանջում է աստվածության սահմանում, այստեղ դուք գործ ունեք «ապշեցուցիչ տարբերակի» հետ:

Բոլոր այս թեորեաները՝ դրանցից ոչ բոլորը, սակայն մեծամասնությունը, լավ են ինչում առանձին վերցված: Առաջին թեորեան (աշակերտները գողացան մարմինը)՝ հրեա առաջնորդներն իրենք էին հորինել, բայց երբ դիտում ենք այս փաստերը որպես անքննարկելի, դուք կրկին ստիպված դիմում եք «ապշեցուցիչ տարբերակին»:

Ես ատում եմ, ես միշտ ատել եմ դա, երբ աշխատում էի պատմությունից իմ գիտական աստիճանի շուրջ, ես ատում եմ ինքնարդարացող օբյեկտիվ պատմաբաններին. »Ես օբյեկտիվ եմ, ես ոչ մի կարծիք չեմ հայտնում«: Գոյություն չունի գիտելիքներով լի մի անձնավորություն, որը չունի կարծիք: Գիտելիքը պահանջում է կարծիք. ոչ մի փաստերի ցուցադրում ձեզ չեզոք չի պահում: Գիտելիքը պահանջում է կարծիք, – երբ դուք քննում եք փաստերը, գոյություն ունեն միայն երկու տարբերակներ: Կամ այս աշակերտներն էին ինարել

պատմությունը կամ նրանք պատմում են այն, ինչ իրականում պատահել է: Եկեք քընենք յուրաքանչյուր տեսությունը – բացահայտենք տարբերակները:

1. Նրանք գողացան մարմինը (թեորեա 1)

Նրանք գողացան մարմինը (թեորեա 1), այնուհետ- ակնհայտորեն ստեցին (թեորեա 7):

2. Յրեա առաջնորդնե՞րը գողացան մարմինը (թեորեա 2): Այս փաստերը կանխում են դա. Նրանք ցանկացած մեկից ավելի շատ էին շահագրգռված քարոզչությունը հակառակ պացուցելու մեջ, այնպես որ, ինչու՞ պետք է նրանք դատարկեին գերեզմանը: Եվ եթե նրանք անեին դա, կասեին. »Մի րոպե սպասեք. մենք ենք վերցրել նրա մարմինը գերեզմանոցից«: Նրանք անգամ չեին կարող մտածել այդ պատմության մասին. Նրանք ասեցին, որ դա աշակերտություն էին, բայց եթե անգամ դա տրամարանական լիներ, նրանք պարզապես չեին քարոզի դատարկ գերեզմանն ու հարությունը:

Նրանք քարոզում էին թվացող Յիսուսին, Ում հետ որ մասնակից էին եղել. Նրանք քարոզում էին համբարձումը հավաստող եռանդով: Այսպիսով՝ նույնիսկ եթե հրեա առաջնորդները՝ գողանալով մարմինը, բացատրեին դատարկ գերեզմանը, նրանք դեռ պատմում էին ավելացումներ հարություն առած մարմնի – համբարձման վերաբերյալ, այնպես որ նրանք դեռ հորինում են շատ բաներ այդ պատմությունից՝ Նրանք ստում են:

3. Յռումեացի առաջնորդնե՞րը վերցրեցին մարմինը (թեորեա 3): Երուսաղեմում տեղի ունեցուղ հակասությունների, հռումեացիների հետ հրեա առաջնորդների ունեցած կապերի հետ միասին, ինչը ինարավորություն տվեց նրանց իրագործել խաչելությունը, չե՞ք կարծում, որ նրանք կցուցադրեին այս փաստը, որ պաշտոնական հռումեական կառավարությունն է վերցրել մարմինը: Բայց նույնիսկ եթե դա բացատրում է դատարկ գերեզմանը, այն չի թեթ-ացնում աշակերտություն պատասխանատվությունը հարություն առած մարմինը – համբարձումը քարոզելու համար, ինչի հետ նրանք բախվել են, այսպիսով՝ նրանք դեռ ստում են:

4. Կանայք գևացին սիսա՞լ գերեզմանոց (թեորեա 4): Դա հայտնի, մատչելի գերեզմանոց էր: Յրեա առաջնորդների հետաքրքրվածությունը կտաներ նրանց այդ հայտնի գերեզմանոցը, – այն ամենը, ինչ նրանց անհրաժեշտ էր անել սիսալ գերեզմանոցի թեորիան ապացուցելու համար, դա այն գերեզմանոց գևալն էր, որտեղ որ մարմինն էր. Նրանք կանեին դա:

5. Յայուցինացիանե՞ր (թեորեա 5): Դե, դատարկ գերեզմանը փչացնում է ողջ գործը: Եթե դա պարզապես հայուցինացիաներ լինեին, գերեզմանի մեջ մարմին կլիներ: Դուք պետք է զուգակցեք դա մարմինն առ-անգելու հետ: Այնպես որ, նրանք դեռ ստում են:

6. Վերակենդանացու՞մ (թեորեա 6): Դե, գերեզմանից դուրս եկող այդ ֆրանկենշտեյնն այդքան ել չի համապատասխանում այն բարի Յիսուսին, որը քարոզվում էր: Դա կարող էր բացատրել դատարկ գերեզմանը, սակայն դա չի բացատրում այնպիսի Յիսուսին, որին որ քարոզում էին, չի բացատրում համբարձումը. Նրանք դեռ հորինում են շարունակությունը:

Այսպիսով՝ կապ չունի, թե ինչպես եք նայում դրան, եթե ենթադրում եք այդ ութ փաստերը, որոնք ավելի հեշտ է բացատրել, քան հարությունը, կա միայն երկու տարբերակ, երկու եզրակացություն, քանի որ դա հանգում է ականատեսների

ստույգ լինելուն: Այդ է պատճառը, թե ինչու ես հարգանք չունեմ այս մարդկանց հանդեպ, ովքեր հերցում են հարությունը - չեն կարդացել կլասիկան՝ Շերլոչի «Վկաների փողոքայուսուր»: Նա պատկերեց դատարանի դահլիճի մի տեսարան, որտեղ բոլոր վկաներն եին հավաքված - ենթարկված Անգլիական դատարանի ցուցմունքների օրինակին: Կա՞մ նրանք չեն կարդացել իրավաբանի կողմից գրված «Ով շառժեց բարը», որը ցանկանում էր հերթել հարությունը, բայց ավատեց գրելով ամենահավաստիացնող փաստը:

Դուք գործ ունեք »ապշեցուցիչ տարբերակի« հետ. կամ **ՏԱՐԲԵՐԱԿ 1** / Տեսություն 7/ այս աշակերտներն եին հնարել պատմությունը իրենց երեսները մաքուր ցույց տալու համար - ամեն ինչ սուտ է, կամ. **ՏԱՐԲԵՐԱԿ 2.** / Տեսություն 8/ **Նրանք պատմում են այն, ինչ իրականում պատահել է որպես ազնիվ մարդիկ:**

Եթե դուք դժվարանում եք տարանջատել փաստերը, տեսությունները - տարբերակները, թույլ տվյալ պարզաբանեմ. Կա 8 փաստ որոնք կրճատում են 8 տեսությունները »ապշեցուցիչ տարբերակին«, այսինքն 7-րդ - 8-րդ տեսությունները, որոնք դարձան միակ հավատալի տեսությունները, այսինքն միակ 2 տարբերակները. Նրանք ստեցին կամ նրանք ասեցին ճշմարտությունը:

Երբ մենք հասնում ենք այդ կետին, ողջ քրիստոնեական հավատքը շրջվում է. այս աշակերտները, ովքեր վկաներն եին, ազնիվ մարդիկ եին, որոնք պատմում եին այն, ինչ տեսել եին, թե՞ դավադիրներ եին, որոնք իրենց երեսը մաքուր ցույց տալու համար մի սուտ հորինեցին, - գոյություն ունի չորս պատճառ, թե ինչու ես չեմ կարող հավատալ, որ նրանք ստում եին.

Պատճառ 1. Վկաների կողմից հեղաշրջող փոփոխություն դեպի լավը:

Բոլորն ել համաձայն են, որ **Պետրոսը ոչ հաստատուն էր**, - չեր կարելի խմբի մեջ նրան հաշվել որպես հուսալի: Նա վախեցած փախավ - ուրացավ իր Տիրոջը, և սա միշտ դժվարությունների մեջ էր իր ոչ հաստատուն լինելու պատճառով: Յարությունից հետո նա այն մարդն է, ով քարոզում է ծաղրող ամբոխին, և այս իրականացնում է իր ճակատագիրը՝ Վեմը դառնալու համար, և այս խիզախությամբ է մահանում՝ խնդրելով, որ իրեն գլխիվայր շրջեն, քանի որ արժանի չի մահանալու իր Տիրոջ դիրքում. հեղաշրջող փոփոխություն, որը կարելի է նույնացնել պատմության մեջ մի կետի հետ, - պատմության այդ կետն այնտեղ է, որտեղ նրանք սկսեցին պատմել հարության այս պատմությունը:

Հովհաննեսը: Չափազանց եսակենտրոն: Նա »Որոտի Որդիներ« կոչվող եղբայրներից մեկն էր: Նա ցանկանում էր երկնքից կրակ իշեցնել ամեն մեկի վրա, ով կիակառակվեր իրեն: Նա - իր եղբայրը օգտագործեցին իրենց մորը արքայության մեջ ամենալավ նստատեղը գտնելու համար: Այն բանից հետո, երբ նրանք սկսեցին պատմել այս հարության պատմությունը, ամեն մի գիտուն մարդ համաձայնում է, որ Հովհաննեսը փոխված մարդ էր: »Որոտի Որդու« փոխարեն, և այս համարյա առաջյալ է իր երեք չճախողվող սիրո արտահայտության մեջ: Նա հայտնի է որպես »Սիրո Առաքյալ«՝ ողջական հեղաշրջող փոփոխություն:

Թովմասը կայուն կասկածող է. սկզբից մինչ- վերջ, և այս կասկածող է: Նա ռեալիստ է, և այս հարցաքննում է ամեն բան: Երբ Յիսուսը պատրաստվում է անցնել Սամարիայով - դեմ առ դեմ հանդիպել մահվանը - պատմում է իր աշակերտներին դրա մասին, թովմասն այդ ժամանակ ասում է. »Մենք ել գնանք Նրա հետ մեռնենք«: Դա խիզախություն է, բայց և այս մտածեց, որ Յիսուսն իրականում կմահանար՝ դա հումանիստական տեսակետ է:

Երբ Յիսուսը քննարկում էր գևալու, երկնքում առանձնատուն կառուցելու մասին, ասում է. »Եվ որտեղ որ Ես գևում եմ՝ գիտեք – ճանապարհը գիտեք«, մնացած բոլորը հաստատ բղավում են առանձնատների մասին: Թովմասը լսում է ամեն մի բառը: Նա ասում է. »Մենք չգիտենք, թե որտեղ ես գևում, – ինչպես կարող ենք ճանապարհը գիտենալ«: Այժմ սա մի բժախնդիր անձի բնավորության գծի ուրվագիծ է:

Ո՞վ է կասկածում, երբ գալիս է հարության պահը: Նույն երիտասարդը: »Եթե Նրա ծեռքերում բ-եռների նշանը չտեսնեմ, – իմ մատը չդնեմ բ-եռների տեղը, – իմ ծեռքը չկոխեմ Նրա կողը, չեմ հավատա«: Գալիս է այդ պահը: Յիսուսն այնտեղ է – ասում է Թովմասին. »Տես իմ ծեռքերը – իմ կողը«: Նա ասում է. »Երանի նրանց, որ չեն տեսել – հավատում են«: Դա անառարկելի ճշմարտություն է, բայց Նա չդատապարտեց Թովմասին: Նա պարզապես հաստատեց այդ փաստը – հետո առաջարկեց Ենթարկվել փորձությունների, ինչու հենց այն է, ինչ այսօր անում ենք մենք: Նա ասեց. »Տես իմ ծեռքերը – իմ կողը«: Եվ Թովմասը գոչեց. »Իմ Տեր – իմ Աստված«:

Նշանակալից է, որ աշխարհի փիլիսոփայական շրջանների մեջ մասում, որտեղ Վերդայական փիլիսոփաները տարածել են Բուդիզմն ու դրանից բխող ար-Ելյան կրոնները, հենց Թովմասն է, որ կտրում է Յիմալայները, որ մեռնի որպես Նահատակ Սադրասում՝ Յնդկաստանում, որպեսզի դառնա հավատքի բանբերն այդ ժամանակների աշխարհի ամենավիճելի փիլիսոփայական տարածքում, – այլ-ս երբեք նա ակնթարթ անգամ չի տատանվում հավատքի մեջ. ամբողջական փոփոխություն, կայուն կասկածողից դեպի չտատանվող »հավատացյալը«: Այժմ, դուք կարող եք ասել, որ ճգնաժամը կփոխի մարդկանց, բայց սուտը հազվադեպ կփոխի մարդկանց դեպի լավը. Նրանք ավելի վատը կդառնան: Այս մարդիկ հեղաշրջող ձ-ով փոխվեցին դեպի լավը. Ես չեմ կարծում, որ սուտ խոսելը կաներ դա:

Պատճառ 2. Ներքին կայունությունը – անուղղակի ապացույցներ:

Գոյություն ունեն ճշմարտության անուղղակի ապացույցներ: Մարկոսը գրում էր հեթանոսներին. դուք կարող եք հաշվել դա Մարկոսի Ավետարանում, Նրա մոտ Քրիստոս Ինքն իր մասին ակնարկում է որպես »Մարդու Որդի« ավելի հաճախ, քան ցանկացած մյուս Ավետարանում: Յաշվեք ինքներդ:

Այժմ, եթե նա ստախոս լիներ, իմանար, որ սուտ է խոսում, փորձելով խարդախություն գործել, ինչո՞ւ պետք է Նրա մոտ Յիսուսն ակնարկեր իր մասին մի արտահայտությամբ, որը Ենթադրում է մարդ լինելը, երբ Նրա նպատակն է փորձել ներկայացնել Յիսուսին որպես Աստծո Որդի: Եթե նա ստախոս է, Նրա մոտ պարզապես Յիսուսը կակնարկեր իր մասին որպես Աստծո Որդի: Սակայն, հեգնաբար, որպես Աստծո ազնվության փոքրիկ թաքնված ապացույցներ, Մարկոսի Ավետարանում գրված հեթանոսներին, որը մտադրված էր ապացույցել, որ Յիսուսն Աստծո Որդին էր, Յիսուսն ակնարկում է իր մասին որպես Մարդու Որդի ավելի շատ, քան ցանկացած այլ Ավետարանում:

Այժմ, Յիսուսն իսկապես ակնարկում էր իր մասին որպես »Մարդու Որդի«, քանի որ Յիսուսը քարոզում էր իրեա ունկնդիրին, որը կարդացել էր Ենուքի գիրք – կարդացել էր Դասիելի գիրք, որտեղ Մարդու Որդին ներկայացվում էր մեսիական մի պատկերով՝ փառքի ամպերի մեջ գալով, որ հաստատի իր առքայությունը: Այնպես որ բավականին համապատասխան էր Յիսուսի համար ակնարկել իր մասին որպես Մարդու Որդի՝ մեսիայի բանականության մեջ, սակայն եթե դուք գրում եք հեթանոսներին, որոնք ոչինչ չգիտեն Յիս կտակարանի մասին, – որոնք փորձում են մի սուտ հորինել, որ Յիսուսն Աստծո Որդին է, մինչ-դուք պարզապես

հիմնովին ազնիվ չինեիք – չասեիք ճշմարտությունը, ձեզ մոտ Յիսուսն այդքան հաճախ չեր ասի »Մարդու Որդի«: Ինչո՞ւ չփոխել իր ասածները ձեր նպատակին ծառայեցնելու համար: **Բնածին ազնվություն:** Ես կարող եի սրա նման շատերն ասել, բայց դա այն է, ինչ պատմաբաններն անվանում են ազնվության անուղղակի ապացույց:

Այն փաստը, որ աշակերտները սպասեցին յոթ շաբաթ, օգտագործվում է նրանց կողմից, ովքեր ասում են, որ նրանք ստում եին, կարծես դա այն ժամանակն էր, որն անհրաժեշտ էր նրանց՝ սուստ պատրաստելու համար: Եթե նրանք բավական խելոք են այս բնույթի սուստ ասելու համար, իմ դատողությունն այն է, որ նրանք կիաշվարկեին դա, նրանք սպասեցին յոթ շաբաթ, որովհետ- Յիսուսն էր պատվիրել նրանց սպասել: Դա ազնիվ մարդկանց գործողություն է, չնայած որ այդքան երկար սպասելը վնասում էր իրենց պատմությանը՝ եթե նրանք պատրաստվում եին սուստ հնարել:

Պատճառ 3. Վճարված գինը:

Սուստ խոսելու համար դուք չեք վճարում այն գինը, որ վճարեցին այդ մարդիկ: Նրանցից բոլորը, բացի Յովիհաննեսից, մահացան նահատակի մահով. Բարթողեմեոսի մաշկը մտրակելով հանեցին՝ մինչ- մահ, Յայաստանում, Թովմասին կտրեցին Բրահմանի սրով, Պետրոսը գլխիվայր խաչվեց, Սուրբ Ասդրեասը խաչվեց Սուրբ Ասդրեասի խաչի վրա (որից այն ստացել է իր անվանումը), Ղուկասին կախեցին կրապաշտ քահանաները, Մարկոսին քարշ տվեցին Ալեքսանդրիայի փողոցներով մինչ- մահանալը: Այս մարդիկ մարդկային հավատքից վեր վճարեցին իրենց »ստի« համար:

Պատճառ 4. Նրանք մահացան մենակ:

Սուրբ Թոմաս Աքինասի մեծ՝ կարծում եմ մեծագույնը, ապացույցը աշակերտների – հարության ճշմարտության մասին դա այն է, որ նրանք մենակ մահացան: Այժմ՝ ինչպես ես անում եմ ամեն տարի, երբ ավարտում եմ այս ուղերձը, կարող եմ ծ-ակերպել նրանց որպես տղամարդկանց մի խումբ, որոնք փորձում եին պարզ ցույց տալ իրենց երեսը, պատմում եին մի պատմություն, սխալ մարդու վրա են գրագ եկել, կործանվել եին իր ծախողումից (ինչպես նրանք կարող եին դիտել դա), փորձում եին կենդանացնել նրան ստի միջոցով:

Ես կարող եմ ծ-ակերպել, որ նրանք ապրում եին միասին – իմբակային ճնշումը միաբան էր պահում նրանց ստի կայունությունը, քանի որ նրանք չեն ցանկանում առաջինը կոտրել հավատքը, դավաճանել մյուսներին – տապալել ողջ գործը:

Եկեք ենթադրենք, որ Դ-ր Բադրի Գարսիան – Եղ Մասրին, որն ճանաչված իրավաբան է /Երին Բրակովիչի Փիլմի հերոսը/ – Դ-ր Ջրահգ Լամփը /որը ներկա է այսօր այստեղ/ հորինել են այս պատմությունը: Դուք չունեք հեռուստացույց, դուք չունեք արբանյակ, դուք չունեք ֆաքս, դուք չունեք հեռախոս, – քանի դեռ դուք երեք միասին եք մասում մեծ ճնշման ներքո, դու չես ուզում լինել այն մեկը, Եղ, ով կդավաճանի Ջրահգին – Դ-ր Բադրին:

Սակայն, այժմ եկեք բաժանենք ձեզ: Դու, Եղ, եղիր Բարթողեմեոսը Յայաստանում, իսկ դու, Դ-ր Բադրի, եղիր Թովմասը Ղնդկաստանի շուրջը: Իսկ դու, Գրահգ, եղիր Պետրոսը Յառմում: Դուք կորցորել եք կապն իրար հետ: Դու չես կարող վերցնել լսափողը – զանգահարել որ-է մեկին. ոչ ոք չգիտի, թե որտեղ ես դու, – քանի որ դու գիտես, որ սուստ ես խոսում – գիտես, որ իրականում չես սպասում, որ սերունդները հավերժ կիավատան դրան, – քեզ բառացիորեն մաշկահան են անում մինչ- մահ՝ այսինքն, քարշ տալով մաշկը դուրս է գալիս, քո մաշկը պլոկվում է քո

վրայից, այն ամենը, ինչ քեզ պետք է անել, դա ասելն է. »Այդ ամենը սուտ է « - »Կներեք, ես լքում եմ քաղաքը«:

Բաղդին չեր իմանա դա, Գրահիգը չեր իմանա դա: Դու կարող եիր տեսնել նրանց հաջորդ անգամ՝ միասին պատմություններ փոխանակելիս – ասելիս. »Տղաներ, ես իսկապես նրանց հախից եկա Յայաստանում: Ես այնպես պատմեցի պատմությունը, որ ոչ ոք չկարողացավ մոռանալ այն«: Բաղդին – Գրահիգը չեին իմանա, որ դու ստում ես: Դու, քեզ պատրաստվում ես սրով կտոր-կտոր անել Յնդկաստանում. դու ել երբեք չես տեսնի այս մարդկանց: Այն ամենը, ինչ քեզ պետք է անել ճնշումից դուրս գալու համար, դա ասելն է. »Սա սուտ է «:

Դու Գրահիգ, քեզ բռնել են Յօռմում. դու մի փոքր ավելի ես ցուցադրվում, բայց քո կյանքին վտանգ սպառնալով, – այն ամենը, ինչ քեզ պետք է ասել, դա. »Ներողություն: Գուցե ես երազումս եի տեսել դա«, – դուրս պրծնել – ու-որվել դեպի Ֆրանսիա: Ինչպես ասել է Թոմաս Աքինասը՝ հոգեբանորեն անըմբռնելի է, որ այս մարդկանցից, որոնք բաժանված եին, ամեն մեկը՝ վճարելով գերագույն գինը իր պատմության համար – յուրաքանչյուրը մենակ մահանալով, իմբից որ-է **մեկը** չառանձնանար իր ընկերություն – չասեր. »Դեյ, դա ճշմարտություն չեր«:

Մահանալ մենակ: Եվ ապացույցի ոչ մի կտոր չի մնացել ուժեղ քննադատման 2000 տարիների ընթացքում, դուք երբեք չեք գտնի որ-է մի գրառում երկրագնդի երեսին, որտեղ այս մարդկանցից ցանկացածը երբ-է տատանվեր այս պատմությունը պատմելիս՝ մինչ- իրենց ահավոր մահը: Այդ պատճառով ես եկա այն եզրահանգմանը, որ ոչ մի ձ-ով այս մարդիկ սուտ չեին կարող խոսել: Նրանք պատմում եին այն, ինչ նրանք մտածում եին – փորձառություն եին ունեցել – տեսել եին՝ որպես ճշմարտություն:

Ես իիշում եմ, թե ինչպես կի անում սա իմ պրոֆեսոր Լարի Թովմասի հետ Ստենֆորդում, – ևա ասեց ինձ. »Զին, ես համոզված եմ: Այս մարդիկ հավատում եին նրան, ինչ որ պատմում եին: Այդ իսկ պատճառով այս մյուս ութ փաստերից մի քանիսը պետք է որ սխալ լինենք: Դե, եթե դու ազնիվ ես – ասում ես դա, ես լսում եմ քեզ, որովհետ- այդ մյուս ութը շատ ավելի հեշտ է ցուցադրել: Ո՞րև է տարբերակը:«

ԴԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՆԱ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԳԵՐԵՉՍԱՆԻՑ:

Դե, եթե դա ճշմարտություն է, ապա ի՞նչ: Մնացած ամեն ինչը ճշմարտություն է, – ես ունեմ սկզբնակետ հավիտենական կստծուն հավատալու համար: Եվ ես հետո անցել եմ այդ շեմքից, որտեղ այժմ կարող եմ ըմբռնել, թե ինչ է քրիստոնեությունը, քանի որ եթե ես կարող եմ հավատալ, որ Յիսուս Քրիստոսը դուրս է եկել գերեզմանոցի այդ շորերից, ժայռի, այդ դռան միջով – երկինք է բարձրացել լողալով, ապա մոլեկուլյար փոխադրումը Նրա համար ոչինչ է. Նա կարող է անել դա առանց պայթյուն ստեղծելու: Դա ճշմարտություն է, որ բոլոր բաները գոյություն ունեն Նրա մեջ, – Նա կարող է դեկավարել դրանք:

Այդ պատճառով, ընդհանրապես դժվար չէ հավատալ, որ կստծո այդ նույն անփոփոխ եռթյունը՝ տեղադրված Մարիամի ներսում, հանդես եկավ որպես Յիսուս Նազուրեցի՝ Սուրբ Յոգու միջոցով: Կստված ասում է, որ Նա տեղադրում է այդ նույն աստվածային եռթյունը մեր մեջ, երբ մենք կստահում ենք Նրան: Դա իրական վերստին ծննդի վերապրումն է՝ կյանքի գեներատոր, ռեգեներացիա, մի նոր արարած, որը Ներթափականցում է իմ բջջային կառուցվածքի մեջ – տեղադրվում է իմ ներսում՝ որպես պարգ- կստծուց, երբ ես կապնվում եմ Նրա խոսքին հավատալով:

Դա բոլոր քրիստոնյաների ծնունդն է՝ լավ եր-ացող, որ Քրիստոսը մեր ներսում փառքի հույսն է: Ես կարիք չունեմ դառնալու մի ինչ-որ առեղծվածային կամ շեղված ծայրահեղություն, որպեսզի հասկանամ, թե ինչ է քրիստոնեությունը: Ես այժմ կարող եմ անցկացնել իմ կյանքը՝ հետ-ելով Նրա խոսքին, ներառյալ այն հեղինակությունը, որ Նա տաիս է Յիս կտակարանին, – խոստմունքները, որոնք գրված են այստեղ:

Եվ ամեն անգամ, երբ ես ամուր բռնում եմ այդ ամենից – գործում եմ իմ հավատքով ու Վստահությամբ շարունակում եմ գործել, այդ հավատքի կապն իմ մեջ պահպանում է կյանքի եռթյունը՝ այս, որը հարություն տվեց Քրիստոսին մեռելներից, որն ընդունակ է փոխել իմ բնույթը ինչպես ռադիոակտիվ նյութը, գուցե – այս անտեսանելի է, բայց կարող է փոխել ձեր բջջային կառուցվածքը, երբ դուք բռնվում եք դրանից:

Աստված ձեր մեջ դժում է մի կյանք, որն ընդունակ է վերածնվել, – ահա թե ինչու է հոգ-որը կազմվում հոգու արտահայտություններից – ինչու է հոգ-որը կոչվում հոգու պտուղ:

Մեր միջից դուրս աճող այդ նոր կյանքն է, որը կարող է միմիայն ձեռք բերվել հավատքով դեպի իր խոսքը, սակայն դա հիմնադրվել – հիմնվել է ապացուցվող առանձնահատկություն ունեցող այն ժայռի վրա, որն է. »Նա հարություն առավ մեռելներից«, – դա իմ մեջ հավատք է ներշնչում, որպեսզի հավատամ, որ Նա կանի նա- հաջորդ բանը, որ ասեց, որն է՝ Նա նորից կգա:

1992թ. ապրիլի 19-ին Դ-ր Ակոստող վերջապես հասավ այս ուղերձը քարոզելու իր երկարաժամկետ նպատակին (նրա ծառայության հիմնաքարը) մեկ ժամկա ընթացքում՝ ի դեպ, նա հասավ այդ նպատակին յոթ րոպե շուտ: